«ԵՐԵՎԱՆԻ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՄԱՍՆԱՇԵՆՔԻ (ԹԱՆԳԱՐԱՆԱՅԻՆ ՄԱՍ) ՄԱՍՆԱԿԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N «ԲՄԱՇՁԲ-2020/1-ԵՊԲՀ»

ք. Երևան «29» 10 2020 թ.

«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամը, ի դեմս ռեկտոր **Ա. Ա. Մուրադյանի**, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և **«ԱԳԱԹ-777» ՍՊԸ-ն**, ի դեմս տնօրեն **Դ. Եսայանի**, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված **Համալսարանի կենտրոնական մասնաշենքի (թանգարանային մաս) մասնակի վերանորոգման աշխատանքները** (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ **90 օրացուցային օր:**

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը:

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար.

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը).

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին.

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները:

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով:

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2 Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով:

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին:

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք:

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3 Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4 Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքները կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործվելիք նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները ներկայացված են նախագծանախահաշվային փաստաթղթերում:

3.4.10 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում, Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված **տասն** աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ

սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումը ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն.

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է **72992348 (յոթանասուներկու միլիոն ինը հարյուր իննսուներկու հազար երեք հարյուր քառասունութ) ՀՀ դրամ, որից 12165391 (տասներկու միլիոն մեկ հարյուր վաթսունհինգ հազար երեք հարյուր իննսունմեկ) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն**: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում, տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում, սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող

պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Սույն պայմանագիրը կազմված է **19 (տասնինը)** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

«ՊԱՏՎԻՐԱՏՈՒ»	«ԿԱՊԱԼԱՌՈՒ»
«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամ	**«ԱԳԱԹ-777» ՍՊԸ**
Հասցե՝ ք. Երևան, 0025, Կորյունի 2	**Հասցե՝ ք. Երևան, Շիրակի փակուղի 4**
Բանկ՝ «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ, Տերյան մ/ճ	**Բանկ՝ «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ**
Հ/Հ 11500166513800	**Հ/Հ 1150000285850100**
ՀՎՀՀ 01503448	**ՀՎՀՀ 01807983**
	Էլ. փոստ՝ agat-777llc@mail.ru
	Հեռ. 094-94-85-84
Ռեկտոր՝ Ա. Ա. Մուրադյան	**Տնօրեն՝ Դ. Եսայան**
(ստորագրությունը)	(ստորագրությունը)
Կ.Տ	Կ.Տ

Հավելված N 1
«29»_____10_____2020թ. կնքված
«ԲՄԱՇՁԲ-2020/1-ԵՊԲՀ» ծածկագրով պայմանագրի

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ

«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի կենտրոնական մասնաշենքի (թանգարանային մաս) մասնակի վերանորոգման աշխատանքների

հազ. ՀՀ դրամ

Հ/հ	Հիմնա-վորում	Աշխատանքների անվանումը	Չափի միավորը	Քանակը	Միավորի արժեքը	Ընդհանուր արժեքը
		Քանդման աշխատանքներ				
1	11-225	Գաջե սվաղի քանդում պատերից	մ2	753.000	0.500	376.500
2	11-225	Գաջե սվաղի քանդում շեպերից	մ2	107.000	0.500	53.500
3	11-88 կիրառելի	Միջանցքի խճանկար հատակի կացնահատում	մ2	171.100	1.300	222.430
4	23-226 գնաց 3	Շին. աղբի բարձում և տեղափոխում 12 կմ հեռ. վրա	տ	23.500	2.000	47.000
		Բացվածքներ				0.000
1	Ինֆ. տեղ.	Ալյումինե, բլոկով, սպիտակ, 60մմ հաստ., ջերմակամուրջով, ապակեփաթեթով 4+4մմ, պրոֆիլ (արտերկիր), բացվող	մ2	14.280	48.000	685.440
2	Ինֆ. տեղ.	Ալյումինե, բլոկով, սպիտակ, 60մմ հաստ., ջերմակամուրջով, ապակեփաթեթով 4+4մմ, պրոֆիլ (արտերկիր), չբացվող	մ2	38.760	35.000	1,356.600
3	15-78	Գրանիտե պատուհանագոգերի տեղադրում 3սմ հաստ. սալերով /գույնը և տեսքը ըստ Պատվիրատուի/	մ2	36.880	80.000	2,950.400

4	շուկա	Փայտե երկփեղկ դուռ, /վիտրաժների հետ միասին/ փայտի տեսակը սոճի, նալիչնիկը և քիվը փայտի և ՄԴՖ-ի համադրությամբ, փականով, տեղադրումով 270*150*50 /գույնը և տեսքը ըստ Պատվիրատուի/	հատ	5.000	600.000	3,000.000
		Հատակներ				0.000
1	5-72	Բետոնե հատակի իրականացում B20 բետոնով	մ3	16.800	30.000	504.000
2	26-33	Ամրանավորում Փ8Ac-I 200*200 ցանցով	տ	0.950	320.000	304.000
3	5-85 5-86	Ց/ավազե հարթաշերտի իրականացում 50մմ հաստ.	մ2	240.000	3.000	720.000
4	շուկա	Մոզաիկ հատակների իրականացում հատուկ պատրաստված ձեռագործ բազալտե գլազուրապատ սալիկներից թրծված 950 C0 1սմ հաստ. /էսքիզը ըստ Պատվիրատուի 4սմ/	մ2	4.000	77.000	308.000
5	շուկա	Դեկորատիվ ձեռագործ հայկական կավից թրծված 950 C0 սալիկներից հատակների իրականացում /էսքիզը ըստ Պատվիրատուի 30*30/	մ2	70.000	25.000	1,750.000
6	5-115	Պրեսգրանիտե, 600*1200մմ սալերով հատակների իրականացում /ըստ Պատվիրատուի/	մ2	411.200	36.000	14,803.200
7	11-252	Պրեսգրանիտե, 600*1200մմ սալերով շրիշակների իրականացում /ըստ Պատվիրատուի/	գծմ	24.200	5.988	144.900
		Ներքին հարդարման աշխատանքներ				0.000
1	11-178	Պատերի լավորակ գաջի սվաղում	մ2	615.000	1.800	1,107.000
2	11-188	Շեպերի բարձրորակ գաջի սվաղում	մ2	107.000	2.400	256.800
3	34-316 34-351	Գիպսակարտոնից կախովի առաստաղի իրականացում հիմնակմախքի պատրաստումով 9.5մմ	մ2	169.000	4.000	676.000
4	34-316 34-352	Արմսթրոնգ կախովի առաստաղի իրականացում հիմնակմախքի պատրաստումով /ըստ Պատվիրատուի/	մ2	171.200	4.500	770.400

5	շուկա	Փայտից լաքապատ առաստաղի իրականացում /вагонка/ /ըստ Պատվիրատուի/	մ2	57.200	15.000	858.000
6	14-418	Պատերի և շեպերի լավորակ ներկում լատեքսային ներկով	մ2	722.000	1.900	1,371.800
7	14-419	Առաստաղների լավորակ ներկում լատեքսային ներկով	մ2	169.000	1.900	321.100
8	15-262	Պատերի ց/ավազե սվաղի իրականացում	մ2	91.000	1.600	145.600
9	15-262	Շեպերի ց/ավազե սվաղի իրականացում	մ2	17.700	1.600	28.320
10	13-53	Պատերի և շեպերի երեսպատում տուֆե սալերով /ծեծած ձեռքով ըստ Պատվիրատուի/	մ2	108.700	18.000	1,956.600
		Այլ աշխատանքներ				0.000
1	8-140	Դռների բացվածքների փակում պեմզաբլոկներով 100մմ	մ3	1.740	18.500	32.190
2	8-140	Պատուհանների տակի խոռոչների փակում պեմզաբլոկներով 200մմ	մ3	8.000	18.500	148.000
3	9-118	Բացվածքների ուժեղացում մետաղական էլեմենտներով	տ	0.100	490.750	49.075
4	Ինֆ. տեղ.	Անկյունակ 50*50*5	գծմ	18.000	2.000	36.000
5	Ինֆ. տեղ.	Շերտապողպատ 50*5	գծմ	15.400	0.700	10.780
6	Ինֆ. տեղ.	Ամրան Փ12А500с	տ	0.0014	320.000	0.448
7	11-186	Պատերի սվաղում գիպսոնիտով բարձր որակի	մ2	7.300	1.800	13.140
8	Ինֆ. տեղ.	Հեղյուս ГОСТ 24379.1	կգ	1.600	0.990	1.584
9	33-763	Մետաղական էլեմենտների ներկում ГОСТ 30884-2003	տ	0.100	24.540	2.454
10	շուկա	Մուտքի դիմացի բազալտե աստիճանների հղկում	մ2	16.000	1.000	16.000
11	շուկա	Մուտքի դիմացի ծածկատարի երեսապատում ալիկաբոնդով /գրվածքով լուսավորվող ըստ Պատվիրատուի/	մ2	14.000	29.000	406.000
12	շուկա	Տառեր 22սմ	հատ	8.000	11.000	88.000
13	շուկա	Տառեր 18սմ	հատ	16.000	10.000	160.000

14	շուկա	Լոգո	հատ	1.000	129.999	129.999
15	34-317 34-343	Գիպսակարտոնից շախտաների կառուցում 12.5մմ	մ2	27.200	4.000	108.800
		Հրդեհային ազդարարման, անվտանգության, մուտքի թույլատրման, տեսահսկման, վթարային լուսավորման համակարգի, հեռահաղորդակցության ցանցի մոնտաժում				0.000
1	շուկա	Մալուխատար ցինկապատ 200*40	գծմ	60.000	6.000	360.000
		Հրդեհային ազդարարման, անվտանգության, մուտքի թույլատրման և վթարային լուսավորման համակարգեր				0.000
1	10-742-1	Ընդունող-հսկող և ղեկավարող հասցեային սարք ППКОПУ 01149-2-1 Рубеж -20П порт R3	հատ	1.000	200.000	200.000
2	10-742-10	Տեղեկատվության և ղեկավարման վահան Рубеж -БИУ	հատ	1.000	80.000	80.000
3	10-743-2	Հրդեհի ծխային ազդասարք ИП 212-64	հատ	17.000	9.000	153.000
4	10-743-2	Հրդեհի ձեռքի ազդասարք ИПТ-513-11 порт R3	հատ	1.000	9.000	9.000
5	10-742-12	Ռելային մոդուլ РМ-4К порт R3	հատ	1.000	10.000	10.000
6	8-601-2	Տեղեկատվական վահանակ «ԵԼՔ»	հատ	3.000	3.000	9.000
7	10-744-6	Լուսաձայնային շչակ ОПОП 124-7	հատ	8.000	4.000	32.000
8	10-743-2	Շարժման տվիչ ծավալային հասցեային-անալոգային ИО 40920-2 порт R3	հատ	11.000	11.000	121.000
9	10-743-4	Ապակու կոտրման տվիչ հասցեային-անալոգային ИО 32920-2 порт R3	հատ	10.000	5.000	50.000
10	10-743-4	Մագնիսակոնտակտային տվիչ հասցեային-անալոգային ИО 10220-2 порт R3	հատ	8.000	4.000	32.000
11	10-743-4	Ինտերֆեյսային սարք հասցեային ИМ-1 порт R3	հատ	3.000	10.000	30.000

12	10-743-4	Քարտ կարդացող իդենտիֆիկացիոն սարք հասցեային ST-PR160EM	հատ	3.000	10.000	30.000
13	10-743-4	Երկլար գծի մեկուսիչ ИЗ-1 порт R3	հատ	2.000	10.000	20.000
14	8-125-4	Անխափան սնուցման աղբյուր ИВЭПР 12/3,5RS-R3 2x7-РБР	հատ	1.000	20.000	20.000
15	8-125-4	Անխափան սնուցման աղբյուր 12/2 RS-R3 2x7-РБР	հատ	4.000	20.000	80.000
16	8-122-1	Մարտկոց АКБ 12v-7A	հատ	10.000	12.000	120.000
17	8-601-2	Վթարային լուսավորության լամպ Skat LT-301300 LED Li-Ion batt 1300mA/h	հատ	7.000	5.000	35.000
18	8-409-1	Մալուխ հրակայուն КПСЭнг (А) FRLS 1x2x0.5	գծմ	800.000	0.230	184.000
19	8-409-1	Մալուխ հրակայուն КПСнг (А) FRLS 1x2x0.5	գծմ	800.000	0.230	184.000
20	8-409-1	Մալուխ ВВГ Пнг(А)-LS 2x1,5	գծմ	100.000	0.300	30.000
21	8-409-1	Մալուխ ինտերֆեյսային F/UTP Cat. 5e	գծմ	10.000	0.250	2.500
22	8-418-1	Խողովակ d=16 PVX	գծմ	350.000	0.200	70.000
23	8-418-1	Խողովակ d=16 PVX ճկվող	գծմ	250.000	0.200	50.000
24	շուկա	Համակարգի ծրագրավորում, թողարկում և կարգաբերում	հասցե	75.000	0.600	45.000
		Տեսահսկման համակարգ				0.000
1	շուկա	Ցանցային տեսագրիչ 16 տեսախցիկի համար QVC-NVR-216/8 MP-D	հատ	1.000	150.000	150.000
2	շուկա	Ցանցային տեսախցիկ արտաքին տեղադրման QVC I PC-501 (2. 8)	հատ	16.000	42.000	672.000
3	շուկա	Ցանցային տեսախցիկ ներքին տեղադրման QVC I PC-202AL (2. 8)	հատ	15.000	33.000	495.000
4	շուկա	Ցանցային փոխանջատիչ 16 պորտ POE սնուցմամբ QSW-1500-19EF-POE-AC	հատ	1.000	120.000	120.000
5	շուկա	Համակցման վահանակ LAN Union, 24 port 19" 1U ЛЮ-ПКН-24.1Р	հատ	1.000	10.000	10.000

6	շուկա	Համակցման մոդուլ վահանակի մեջ տեղադրվող Keystone Cat, 5e 180 ЛЮ-МКС-5е ВК39, Би	հատ	16.000	1.000	16.000
7	շուկա	Համակցման մալուխ U/UTP Cat. 5e ЛЮ-ШКС-5е.30н.25	հատ	2.000	1.000	2.000
8	շուկա	Մալուխների կազմակերպիչ LAN Union 19" 1U, ЛЮ-ОПК-ПФ 1Р. М19	հատ	1.000	4.000	4.000
9	8-409-1	Մալուխ U/UTP Cat. 5e ЛЮ-КСС-5е.4. 10ВН.25В3	գծմ	915.000	0.250	228.750
10	շուկա	Հիշասարք 8Tb WD 82 PURZ	հատ	1.000	230.000	230.000
11	շուկա	Լարման բաշխիչ 8 տեղ S-8S-V-BL-1.8	հատ	1.000	10.000	10.000
12	շուկա	Մոնտաժային աշխատանքներ	կ-տ	1.000	200.000	200.000
13	շուկա	Համակարգի ծրագրավորում, թողարկում և կարգաբերում	հասցե	16.000	0.600	9.600
		Հեռահաղորդակցության ցանց				0.000
1	շուկա	Տեխնիկական պահարան LN-DB26U6060-BL-261-F	հատ	1.000	250.000	250.000
2	շուկա	Վարդակ RJ-45, Cat.6	հատ	16.000	6.000	96.000
3	շուկա	Վարդակ արտաքին տեղադրման, անլար թույլատրման կետերի համար RJ-45, Cat.6	հատ	3.000	7.000	21.000
4	շուկա	Թույլատրման կետ QWP-320-AC-VS	հատ	3.000	115.000	345.000
5	շուկա	Ցանցային փոխանջատիչ 24 պորտ QSW-4610-28T-AC	հատ	1.000	170.000	170.000
6	շուկա	Ցանցային փոխանջատիչ 16 պորտ QSW-1500-19EF-POE-AC	հատ	1.000	150.000	150.000
7	շուկա	Համակցման վահանակ LAN Union, 24 port 19" 1U ЛЮ-ПКН-24.1Р	հատ	3.000	6.000	18.000
8	շուկա	Համակցման մոդուլ վահանակի մեջ տեղադրվող Keystone Kat, 6 180 ЛЮ-МКС-6 8К81	հատ	24.000	2.000	48.000
9	շուկա	Համակցման մալուխ U/UTP Cat. 6 ЛЮ-ШКС-6 20н.81	հատ	22.000	2.000	44.000
10	շուկա	Մալուխների կազմակերպիչ LAN Union 19" 1U, ЛЮ-ОПК-ПФ 1Р. М19	հատ	1.000	10.000	10.000
11	8-409-1	Մալուխ U/UTP Cat. 6 ЛЮ-КСС-6.4. 25ВН.25К5	հատ	1,525.000	0.250	381.250
12	շուկա	Լարման բաշխիչ 8 տեղ S-8S-V-BL-1.8	հատ	1.000	15.000	15.000

13	շուկա	Մոնտաժային աշխատանքներ	կ-տ	1.000	50.000	50.000
14	շուկա	Համակարգի ծրագրավորում, թողարկում և կարգաբերում	հասցե	19.000	0.600	11.400
		Օդափոխություն				0.000
1	շուկա	Բաշխիչ 4′′ տեղադրումով	հատ	2.000	100.000	200.000
2	շուկա	Ֆանկոյլ կասետային 6.5 կՎտ միջ. սառը	հատ	5.000	470.000	2,350.000
3	շուկա	Ֆանկոյլ կասետային 2 կՎտ միջ. սառը	հատ	8.000	290.000	2,320.000
4	շուկա	Ֆանկոյլի կառավարման վահանակ	հատ	13.000	10.000	130.000
5	16-36	Պոլիպրոպիլենային, ալյումինե շերտով, խողովակների մոնտաժում PN 20, d=20x3,4մմ	գծմ	30.000	1.000	30.000
6	16-37	Պոլիպրոպիլենային, ալյումինե շերտով, տաք ջրի համար խողովակների մոնտաժում PN 20, d=25x4,2մմ	գծմ	80.000	1.500	120.000
7	16-38	Պոլիպրոպիլենային, ալյումինե շերտով, տաք ջրի համար խողովակների մոնտաժում PN 20, d=32x5,4մմ	գծմ	70.000	1.800	126.000
8	16-39	Պոլիպրոպիլենային, ալյումինե շերտով, տաք ջրի համար խողովակների մոնտաժում PN 20, d=40x6,7մմ	գծմ	80.000	2.200	176.000
9	16-40	Պոլիպրոպիլենային, ալյումինե շերտով, տաք ջրի համար խողովակների մոնտաժում PN 20, d=50x8,4մմ	գծմ	30.000	2.800	84.000
10	16-55	Պոլիպրոպիլենային, ալյումինե շերտով, տաք ջրի համար խողովակների մոնտաժում PN 20, d=63մմ	գծմ	80.000	3.800	304.000
11	16-56	Պոլիպրոպիլենային, ալյումինե շերտով, տաք ջրի համար խողովակների մոնտաժում PN 20, d=76մմ	գծմ	120.000	5.000	600.000
12	Ինֆ. տեղ.	Պոլիպրոպիլենային խողովակների ձևավոր մասեր	հատ	120.000	0.400	48.000
13	շուկա	Խողովակների ջերմամեկուսացում ռետինե ջերմամեկուսիչով Φ76	գծմ	120.000	0.400	48.000
14	շուկա	Խողովակների ջերմամեկուսացում ռետինե ջերմամեկուսիչով Φ63	գծմ	80.000	0.400	32.000
15	շուկա	Խողովակների ջերմամեկուսացում ռետինե ջերմամեկուսիչով Φ50	գծմ	30.000	0.300	9.000
16	շուկա	Խողովակների ջերմամեկուսացում ռետինե ջերմամեկուսիչով Φ40	գծմ	80.000	0.300	24.000

17	շուկա	Խողովակների ջերմամեկուսացում ռետինե ջերմամեկուսիչով Փ32	գծմ	70.000	0.200	14.000
18	շուկա	Խողովակների ջերմամեկուսացում ռետինե ջերմամեկուսիչով Փ25	գծմ	80.000	0.200	16.000
19	շուկա	Խողովակների ջերմամեկուսացում ռետինե ջերմամեկուսիչով Փ20	գծմ	30.000	0.200	6.000
20	18-229	Օդահան 3/4	հատ	17.000	1.000	17.000
21	22-365	Փականի մոնտաժում 3/4	հատ	34.000	3.000	102.000
22	16-136	Պողպատե սողնակ dy76	հատ	4.000	70.000	280.000
23	16-136	Հետադարձ փական dy76	հատ	4.000	50.000	200.000
24	շուկա	Փոխակերպիչ	հատ	30.000	5.000	150.000
25	18-165	Ջրի շրջանառու պոմպ G-10 H=12	կ-տ	2.000	250.000	500.000
26	18-165	Ջրի շրջանառու պոմպ G-10 H=5	կ-տ	1.000	200.000	200.000
		Էլ. լուսավորություն				0.000
1	8-599-1	Նկարի լույս LED 12w 3000k	հատ	21.000	25.000	525.000
2	շուկա	LED լույսի ռելս 2մ	հատ	32.000	12.000	384.000
3	8-599-1	Ռելսային լուսատու LED 18w 3000k	հատ	72.000	35.000	2,520.000
4	8-599-1	LED 60*60 90w լուսամուտների մոնտաժում 4000k 25 հատ փոքր քառակուսիներ	հատ	17.000	35.000	595.000
5	8-599-1	Առաստաղի լուսատու LED 40w 3000k	հատ	24.000	20.000	480.000
6	8-525-1	Ավտոմատ անջատիչ եռաբևեռ 25A 10kA	հատ	1.000	8.000	8.000
7	8-525-1	Ավտոմատ միաբևեռ անջատիչ 16A	հատ	14.000	3.000	42.000
8	8-591-8	Վարդակ հողանցման հպակով երկբևեռ	հատ	58.000	2.700	156.600
9	8-402-2	Հաղորդալար АПВ 2*6	գծմ	180.000	0.500	90.000
10	8-402-2	Հաղորդալար АПВ 2*4	գծմ	230.000	0.400	92.000
11	8-402-2	Հաղորդալար АПВ 2*2.5	գծմ	270.000	0.250	67.500
12	8-402-2	Հաղորդալար АПВ 3*2.5	գծմ	15.000	0.300	4.500

13	8-402-2	ԲԲԳ -1 4*10 մմ2 պղնձե ջիղով, մալուխի մոնտաժում	գծմ	30.000	2.600	78.000
14	8-612-8	Ավտոմատ անջատիչների վահանակ 20 մոդուլ	հատ	1.000	8.000	8.000
15	8-591-10	Անջատիչ 1 սեղմակով	հատ	1.000	2.700	2.700
16	8-591-10	Անջատիչ 2 սեղմակով	հատ	2.000	3.700	7.400
17	8-591-10	Անջատիչ 3 սեղմակով	հատ	4.000	4.700	18.800
Ընդամենը						**54,799.060**
Շահույթ 11%						**6,027.897**
Ընդամենը						**60,826.957**
ԱԱՀ 20%						**12,165.391**
Ընդհանուրը						**72,992.348**

Կապալառուն աշխատանքները կատարում է ք. Երևան Կորյունի 2 հասցեում

«ՊԱՏՎԻՐԱՏՈՒ»
«Երևանի Մխիթար Հերացու անվան
պետական բժշկական համալսարան» հիմնադրամ
Հասցե՝ ք. Երևան, 0025, Կորյունի 2
Բանկ՝ «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ, Տերյան մ/ճ
Հ/Հ 11500166513800
ՀՎՀՀ 01503448

Ռեկտոր՝ Ա. Ա. Մուրադյան

(ստորագրությունը)
Կ.Տ

«ԿԱՊԱԼԱՌՈՒ»
«ԱԳԱԹ-777» ՍՊԸ
Հասցե՝ ք. Երևան, Շիրակի փակուղի 4
Բանկ՝ «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1150000285850100
ՀՎՀՀ 01807983
Էլ. փոստ՝ agat-777llc@mail.ru
Հեռ. 094-94-85-84

Տնօրեն՝ Դ. Եսայան

(ստորագրությունը)
Կ.Տ

Հավելված N 2
«29» 10 2020 թ. կնքված
«ԲՄԱՇՁԲ-2020/1-ԵՊԲՀ» ծածկագրով պայմանագրի

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ

«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի կենտրոնական մասնաշենքի (թանգարանային մաս) մասնակի վերանորոգման աշխատանքների կատարման

N ը/կ	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը	
		Սկիզբը	Ավարտը
1	«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի կենտրոնական մասնաշենքի (թանգարանային մաս) մասնակի վերանորոգման աշխատանքներ	Պայմանագրի կնքման օրվանից	90 օրացուցային օր
ԸՆԴԱՄԵՆԸ		Պայմանագրի կնքման օրվանից	90 օրացուցային օր

«ՊԱՏՎԻՐԱՏՈՒ»
«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամ
Հասցե՝ ք. Երևան, 0025, Կորյունի 2
Բանկ՝ «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ, Տերյան մ/ճ
Հ/Հ 11500166513800
ՀՎՀՀ 01503448

Ռեկտոր՝ Ա. Ա. Մուրադյան

(ստորագրությունը)
Կ.Տ

«ԿԱՊԱԼԱՌՈՒ»
«ԱԳԱԹ-777» ՍՊԸ
Հասցե՝ ք. Երևան, Շիրակի փակուղի 4
Բանկ՝ «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1150000285850100
ՀՎՀՀ 01807983
Էլ. փոստ՝ agat-777llc@mail.ru
Հեռ. 094-94-85-84

Տնօրեն՝ Դ. Եսայան

(ստորագրությունը)
Կ.Տ

Հավելված N 3
«29» 10 2020 թ. կնքված
«ԲՄԱՇՁԲ-2020/1-ԵՊԲՀ» ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի կենտրոնական մասնաշենքի (թանգարանային մաս) մասնակի վերանորոգման աշխատանքների կատարման

ՀՀ դրամ

Աշխատանքի															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	45211236/1	«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի կենտրոնական մասնաշենքի (թանգարանային մաս) մասնակի վերանորոգման աշխատանքներ	0	0	0	0	0	0	0	0	0	0	54744261	72992348	72992348

Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով՝ ըստ փաստացի կատարված աշխատանքների:

«ՊԱՏՎԻՐԱՏՈՒ»
«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամ
Հասցե՝ ք. Երևան, 0025, Կորյունի 2
Բանկ՝ «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ, Տերյան մ/ճ
Հ/Հ 11500166513800
ՀՎՀՀ 01503448

Ռեկտոր՝ Ա. Ա. Մուրադյան
(ստորագրությունը)
Կ.Տ

«ԿԱՊԱԼԱՌՈՒ»
«ԱԳԱԹ-777» ՍՊԸ
Հասցե՝ ք. Երևան, Շիրակի փակուղի 4
Բանկ՝ «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1150000285850100
ՀՎՀՀ 01807983
Էլ. փոստ՝ agat-777llc@mail.ru
Հեռ. 094-94-85-84

Տնօրեն՝ Դ. Եսայան
(ստորագրությունը)
Կ.Տ

Հավելված թիվ 4
« » 20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Կատարված աշխատանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց	Աշխատանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 4.1
« » 20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N
պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____
_____-ի
անունը Պատվիրատուի անունը Կապալառուի
(այսուհետ՝ Կապալառու) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
_____
համարը պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի
գնման պայմանագրի շրջանակներում Կապալառուն 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն